ԿԱՊԻՏԱԼԻԶՄ
ԵՎ
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

BookMark

Milton Friedman

CAPITALISM AND FREEDOM

BookMark

Միլթոն Ֆրիդմեն

ԿԱՊԻՏԱԼԻԶՄ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Թարգմանությունն անգլերենից՝
Լիանա Զաքարյանի

new mag

ԵՐԵՎԱՆ
2021

BookMark

ՀՏԴ 330
ԳՄԴ 65.01
Ֆ 881

Ֆրիդմեն Միլթոն
Ֆ 881 Կապիտալիզմ և ազատություն / Միլթոն Ֆրիդմեն; Թարգմ.՝ Լ. Զաքարյան.- Եր.: Newmag, 2021.- 384 էջ:

Ինչպե՞ս օգուտ քաղել կառավարության խոստումներից՝ միաժամանակ խուսափելով անհատի ազատությանը սպառնացող վտանգներից: Այս դասական գրքում Միլթոն Ֆրիդմենը շարադրում է տնտեսագիտության չափազանց ազդեցիկ մի փիլիսոփայություն, որի համաձայն մրցակցային կապիտալիզմը տնտեսական ազատության հասնելու միջոց է և քաղաքական ազատության անհրաժեշտ պայման:

Ֆրիդմենի «Կապիտալիզմ և ազատություն» գիրքը տնտեսագիտության տեսության վերաբերյալ երբևէ լույս տեսած ամենանշանակալի աշխատություններից է: Վաճառվել է ավելի քան մեկ միլիոն օրինակ: Թարգմանվել է 18 լեզվով և շարունակում է ամբողջ աշխարհում սնել տնտեսագիտական միտքն ու քաղաքականությունը:

ՀՏԴ 330
ԳՄԴ 65.01

Նախագծի գլխավոր գործընկեր՝
ԱՐԴՇԻՆԲԱՆԿ
www.ardshinbank.am

Արդշինբանկ

ISBN 978-9939-884-40-0
Licensed by The University of Chicago Press, Chicago, Illinois, U.S.A.
Milton Friedman "Capitalism and Freedom"
© 1962, 1982, 2002, 2020 by The University of Chicago. All rights reserved.
Միլթոն Ֆրիդմեն, «Կապիտալիզմ և ազատություն»
© 2021, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել The University of Chicago Press ընկերության հետ կնքած պայմանագրով:

ԻՆՉՈՒ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ԳԻՐՔԸ

Միլթոն Ֆրիդմենի «Ազատություն և կապիտալիզմ» գիրքը տնտեսագիտական մտքի գոհար լինելուց բացի նաև համակարգաստեղծ աշխատություն է: Ժամանակակից ազատ շուկայի այս ֆունդամենտալ հետազոտությունը զարգացման սկզբունքներ է մշակել և ճանապարհ հարթել զարգացող տնտեսությունների, մասնավոր ձեռնարկատիրության, նոր ձևավորվող համակարգերի համար: Մոնետարիզմի հիմնադիր հայր Ֆրիդմենի գիրքը ժամանակակից տնտեսագիտության գիտական աշխատություններում ամենամեջբերվածն է, և ամենաշատ հղումները մինչև օրս կատարվում են հենց այս գրքին:

Այս աշխատությունը հսկայական ազդեցություն է թողել նաև Հայաստանի Հանրապետության ձևավորման վրա: Խորհրդային Միության փլուզումից հետո ինքնուրույն տնտեսություն ձևավորելու, անկախ ֆինանսական համակարգ կառուցելու, պետություն-մասնավոր հարաբերությունները կանոնակարգելու և խաղի կանոններ սահմանելու ճանապարհին այս աշխատության մեջ ներառված շատ ու շատ գաղափարներ, սկզբունքներ անկյունաքարային են եղել և շարունակում են պահպանել իրենց կենսունակությունը:

Լինելով Հայաստանի խոշորագույն և համակարգաստեղծ բանկերից մեկը, «Արդշինբանկը» մշտապես

կարևորել է տնտեսագիտական մտքի խթանումը, ֆինանսական համակարգի ինստիտուցիոնալ զարգացումը: Միլթոն Ֆրիդմենի գրքի հայերեն թարգմանությունն ու հրատարակումը մեր համեստ ներդրումն է այդ գործում:

«Արդշինբանկը» վստահ է, որ մեր հավաքական միտքը, բարձրակարգ կրթությունը և լիակատար փոխըմբռնումը զարգացման նոր հորիզոններ են բացելու:

Մենք ուժեղ ենք միասին:

ԱՐԴՇԻՆԲԱՆԿ

BookMark

Բովանդակություն

Առաջաբան **Բինյամին Ապելբաում** 11

Նախաբան **2002** 29

Նախաբան **1982** 35

Նախաբան **1962** 43

Գլուխ 1 **Տնտեսական և քաղաքական ազատության փոխադարձ կապը** 46

Գլուխ 2 **Պետության դերն ազատ հասարակության մեջ** 72

Գլուխ 3 **Փողի վերահսկողություն** 98

Գլուխ 4 **Միջազգային ֆինանսական և առևտրային հարաբերություններ** 128

Գլուխ 5 **Հարկաբյուջետային քաղաքականություն** 160

Գլուխ 6 **Պետության դերը կրթության ոլորտում** 178

Գլուխ 7 **Կապիտալիզմ և խտրականություն** 218

Գլուխ 8 **Մենաշնորհ և սոցիալական պատասխանատվություն** 238

Գլուխ 9 **Մասնագիտական լիցենզավորում** 270

Գլուխ 10 **Եկամուտի բաշխում** 312

Գլուխ 11 **Սոցիալական բարեկեցության միջոցառումներ** 340

Գլուխ 12 **Աղքատության դեմ պայքար** 362

Գլուխ 13 **Եզրակացություն** 372

BookMark

Նվիրվում է Ջենեթին, Դեյվիդին
և նրանց հասակակիցներին,
որոնք կանելու են ազատության ջահը
բարդ ոլորաններով:

BookMark

ԱՌԱՋԱԲԱՆ

ԲԻՆՅԱՄԻՆ ԱՊԵԼԲԱՈՒՄ*

Միլթոն Ֆրիդմենը փայլուն տնտեսագետ էր, որի ներդրումը տնտեսագիտության մեջ պսակվեց Նոբելյան մրցանակով, սակայն պատմության դասագրքերում նա իր տեղը գտել է որպես մտավորական և հասարակական գործիչ: Նա քսաներորդ դարի ամենաազդեցիկ գաղափարախոսներից էր, ազատ շուկայական կապիտալիզմի անխոնջ և արդյունավետ պաշտպանը: Նրա գաղափարները փոխեցին աշխարհը:

«Կապիտալիզմ և ազատությունը», որն առաջին անգամ հրատարակվել է 1962-ին, Ֆրիդմենի մանիֆեստն է, շուկաների հանդեպ հավատի հռչակագիրը, որը հաճախ արդարացիորեն անվանում են հետպատերազմյան տարիների ամենակարևոր գրքերից մեկը: Ֆրիդմենի ուղերձն այն է, որ կապիտալիզմը պարզապես բարգավաճման շարժիչ ուժը չէ: Այն մարդկանց տալիս է տնտեսական ազատություն, ինչը, նրա կարծիքով, պատշաճ ուշադրության չէր արժանանում իր ժամանակի բանավեճերում. շուկայական տնտեսության մեջ մարդիկ ազատ են փող վաստակել և ծախսել սեփական

---

* Binyamin Appelbaum, Բինյամին Ապելբաում (ծնվ. 1978 թ.) - տնտեսական թեմաներում մասնագիտացած ամերիկացի գրող, լրագրող: (Բոլոր ծանոթագրությունները՝ հեղինակի: **new**mag-ի ծանոթագրությունները հիշատակվում են առանձին):

հայեցողությամբ: Բայց դա կապիտալիզմի միակ առավելությունը չէ: Ֆրիդմենի խոսքով՝ ազատ շուկայական տնտեսությունը «քաղաքական ազատության անհրաժեշտ պայման է»:

Ավելի քան կես դար անց դժվար է ստուգել այս փաստարկի ճշմարտացիությունը: Գրքի հրատարակման պահին «կապիտալիզմ» եզրույթը որոշակիորեն շնորհազրկված էր և ավելի հազվադեպ էր հայտնվում 1950-ականներին հրատարակված գրքերում, քան հետպատերազմյան որևէ այլ տասնամյակում, իսկ եթե նույնիսկ հայտնվում էր, ապա հաճախ որպես էպիտետ: ԱՄՆ-ում և առավելապես Արևմտյան Եվրոպայում գերիշխում էր այն տեսակետը, որ քաղաքական ազատության պահպանումը պահանջում է տնտեսական ազատության նշանակալի սահմանափակում, ներառյալ շուկաների խիստ կարգավորում և արտադրանքի զգալի վերաբաշխում: 1960-ականներին նախագահներ Քենեդու և Ջոնսոնի օրոք տնտեսական պայմանների ակտիվ կառավարման ջատագովները հասան իրենց ազդեցության գագաթնակետին: Թվում էր, թե դաշնային կառավարությունը երբեմն տնտեսական քաղաքականություն է վարում՝ անելով Ֆրիդմենի ասածի հակառակը:

Կառավարության նկատմամբ գերիշխող հավատը ծնունդ է առել Մեծ ճգնաժամի և Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքների, նաև գիտական այնպիսի նվաճումների շնորհիվ, ինչպիսիք են հակաբիոտիկները և միջուկային էներգիան, որոնք մարդկությանը վստահություն են ներշնչել սեփական ուժերի հանդեպ: Ֆրիդմենին ևս ձևավորել են այդ նույն հանգամանքներն ու փորձառությունները, սակայն նա միանգամայն այլ եզրակացությունների է հանգել: Նա ծնվել է Բրուքլինում 1912-ի հուլիսի 31-ին, Արևելյան

Եվրոպայից գաղթած հրեաների ընտանիքում: Նրա ծնվելուց կարճ ժամանակ անց ընտանիքը տեղափոխվել է Ռահուեյ (Նյու Ջերսի), որտեղ Միլթոնի ծնողները համեստ ապրուստ են վաստակել, որպես խանութպաններ: Միլթոնը Ռաթգերսի համալսարան է ընդունվել 1928-ին՝ 16 տարեկանում՝ մտադիր լինելով ուսումնասիրել մաթեմատիկա և ակտուար դառնալ: Սակայն, սկսել է հետաքրքրվել տնտեսագիտությամբ և իր դասախոսներից մեկի օգնությամբ բաղձալի տեղ է ստացել Չիկագոյի համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի ասպիրանտուրայում: Այստեղ սովորելու ժամանակ էլ հանդիպել է Ռոուզ Դայրեկտորին, որը հետագայում դարձել է նրա կինը և գործընկերը: 1935-ին գումար վաստակելու նպատակով՝ զույգը տեղափոխվել է Վաշինգտոն, Կոլումբիայի շրջան, որտեղ Միլթոնը գրեթե տասը տարի աշխատել է դաշնային կառավարությունում:

Վաշինգտոնում Ֆրիդմենն օգնել է մշակել աշխատավարձերից հարկեր պահելու ժամանակակից համակարգը, որը, որքան էլ հեգնական է, սոցիալական պետության ֆինանսավորման առանցքային գործիք է: Այդ տարիներին նա նաև սկսեց քննադատել տնտեսության մեջ կառավարության աճող դերը: Նա պնդում էր, որ աշխարհը գրեթե առեղծվածի հասնելու չափ բարդ է, ապագան՝ անկանխատեսելի, իսկ մարդկանց կենսապայմանների բարելավմանն ուղղված քաղաքականությունը, որպես կանոն, հանգեցնում է միայն իրադրության վատթարացման: Քաղաքական գործիչները գործում էին խավարի մեջ: Լավագույն քաղաքականությունն էր քիչ բան անել ու դա անել դանդաղ. դեղատոմս, որը նա բազմիցս առաջարկել է իր երկար կարիերայի ընթացքում:

Այս աշխարհայացքն ամրապնդվում էր անցյալի մասին ռոմանտիկ պատկերացումներով: Ֆրիդմենը հաճախ համեմատում էր բարի մտադրություններ ունեցող քաղաքական գործիչների ձախողված որոշումները երևակայական անցյալ դարաշրջանի հետ, երբ կառավարությունը մի կողմ էր քաշվում, իսկ մարդիկ հոգ էին տանում իրենց մասին՝ բարգավաճելով սեփական հնարավորությունների չափով:

Դա նաև բացատրվում էր նրանով, որ Ֆրիդմենը, որպես հրեա, այդ ժամանակ ենթարկվել է խտրականության: Իր կարիերայի սկզբում նա ստիպված է եղել հրաժարվել Վիսկոնսինի համալսարանում դասավանդելուց, քանի որ տնտեսագիտական ֆակուլտետի որոշ աշխատակիցներ հակասեմական հայացքներ են ունեցել: Խտրականության դեմ Ֆրիդմենի առաջարկած դեղամիջոցը խիստ տարբերվում էր այն հակաթույներից, որոնք սովորաբար օգտագործում էին նրա ժամանակակիցները: Քսաներորդ դարի քաղաքացիական իրավունքների շարժումների հիմքում պետական պաշտպանության հասնելու ձգտումն էր: Ֆրիդմենը, սակայն, պնդում էր, որ փոքրամասնությունները պետք է ապավինեն շուկաներին: «Ապշեցուցիչ պատմական փաստ է,– գրում է նա,– որ կապիտալիզմի զարգացումն ուղեկցվել է որոշակի կրոնական, ռասայական կամ սոցիալական խմբերի տնտեսական գործունեության զգալի նվազմամբ: Նրանք, ինչպես ասում են, խտրականության են ենթարկվել»: Ֆրիդմենը պնդում էր, որ ազատ շուկայում խըտրականությունը շատ թանկ է, այնքան թանկ, որ կարիք չկար արգելել այն: Շուկայական ուժերը կլուծեին խնդիրը:

1940-50 թթ. Ֆրիդմենի՝ շուկաներին ապավինելու և կառավարության ազդեցության թուլացման մասին քարոզչությունը

սահմանափակվում էր հիմնականում նրա ակադեմիական գործերով: Սպառողների վարքագծի վրա եկամուտների փոփոխությունների ազդեցության մասին Ֆրիդմենի տեսությունը, ինչպես նաև նրա հեղինակած ԱՄՆ դրամավարկային քաղաքականության պատմությունը մտավոր կշիռ են հաղորդել տնտեսական պայմանների ակտիվ կառավարման դեմ փաստարկներին: Ֆրիդմենը, սակայն, հազվադեպ էր դիմում լայն լսարանին. բացառություններից էր 1946-ին լույս տեսած հոդվածը («Տանիքնե՞ր, թե՞ առաստաղներ»), որտեղ նա դեմ էր արտահայտվել բնակվճարների վերահսկողությանը: 1960-ականների սկզբին Ֆրիդմենն արդեն ականավոր և հարգված ակադեմիկոս էր: Նա մասնակցում էր ռադիոհաղորդումների՝ ելույթ ունենալով հանրային հետաքրքրություն ներկայացնող թեմաների շուրջ, և խորհուրդներ տալիս Կոնգրեսում տեխնիկական թեմաներով: 1961-ին լույս տեսած հոդվածում Time թերթը նրան նկարագրեց որպես ԱՄՆ-ի «ամենափայլուն պահպանողական տնտեսագետի»: Չնայած այս ամենին՝ «Կապիտալիզմ և ազատություն» գրքի հրապարակումից առաջ Դաշնային պահուստային համակարգի պաշտոնյաները դեռ հանդգնում էին առանց կարմրելու պընդել, որ ծանոթ չեն Ֆրիդմենի աշխատանքին:

«Կապիտալիզմ և ազատություն» գիրքը սկսվում է նախագահ Ջոն Ֆ. Քենեդու երդմնակալության ուղերձի վրա հարձակումով, որը նա հնչեցրել էր գիրքը լույս տեսնելուց մեկ տարի առաջ: Խոսքը, մասնավորապես, Քենեդու՝ հաճախ մեջբերվող արտահայտության մասին է, որը թերևս ամենահայտնիներից է նախագահների հռետորաբանության մեջ. «Մի՛ հարցրեք, թե ինչ կարող է ձեր երկիրն անել ձեզ համար,